«ԴԻԼԻՋԱՆԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-Տ-1-Դ-3

ք. Երևան «01» փետրվարի 2018 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ֆոտոն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.5 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3297124 (Երեք միլիոն երկու հարյուր իննսունյոթ հազար մեկ հարյուր քսանչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն

ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար

անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Ֆոտոն» ՍՊԸ
ք. Երևան Կառավարական տուն 3	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ.Սարգսյանի
ՀՎՀՀ՝ 01506515	փ.14շ., բն. 21
«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ	ՀՎՀՀ՝ 90036001
Հ/Հ 16015011277100	«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ
	Հ/Հ 16044050085000
Աշխատակազմի ղեկավար ..... Ա. Գրիգորյան	Տնօրեն ..... Ն. Պետրոսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«01» փետրվարի 2018թ. կնքված
N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-Տ-1-Դ-3 » ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը***	ժամկետը**
5	15331142	Կաղամբ	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	86	326370	3795	ք. Դիլիջան, Կամո 137	3795	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
7	15331166	Վարունգ	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	128	161920	1265	ք. Դիլիջան, Կամո 137	1265	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
9	15331171	Պղպեղ	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	159	40227	253	ք. Դիլիջան, Կամո 137	253	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
10	15331167	Կանաչի խառը	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	988	75088	76	ք. Դիլիջան, Կամո 137	76	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
11	3221126	Մառոլ	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	988	24700	25	ք. Դիլիջան, Կամո 137	25	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
12	15331160	Դդմիկ	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	114	14478	127	ք. Դիլիջան, Կամո 137	127	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
22	3222132	Դեղձ	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	214	54142	253	ք. Դիլիջան, Կամո 137	253	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
23	3222100	Բանան	Էկվադոր	Ներկայացվում է ստորև	կգ	574	435666	759	ք. Դիլիջան, Կամո 137	759	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
37	15842100	Շոկոլադ	Լամզուր ՓԲԸ, ՌԴ	Ներկայացվում է ստորև	կգ	977	98677	101	ք. Դիլիջան, Կամո 137	101	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
39	15842300	Թխվածքաբլիթ 1	Մանչո Գրուպ, ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	544	69088	127	ք. Դիլիջան, Կամո 137	127	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
41	15831000	Շաքարավազ	Ալեքս Հոլդինգ ՍՊԸ, ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	338	427570	1265	ք. Դիլիջան, Կամո 137	1265	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
58	15221000	Ձուկ սառեցված	DA YANG SEAFOOD INC, Կանադա	Ներկայացվում է ստորև	կգ	1084	822756	759	ք. Դիլիջան, Կամո 137	759	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
59	15119610	Ձուկ թարմ	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	999	505494	506	ք. Դիլիջան, Կամո 137	506	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018

73	15871257	Աղացած պղպեղ սև	Զոլոտոե տեստո, ՌԴ	Ներկայացվում է ստորև	կգ	2347	30511	13	ք. Դիլիջան, Կամո 137	13	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
74	15871257	Աղացած պղպեղ կարմիր քաղցր	Զոլոտոե տեստո, ՌԴ	Ներկայացվում է ստորև	կգ	967	24175	25	ք. Դիլիջան, Կամո 137	25	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
78	15870000	Վանիլին	Փաթեթավորված ՀՀ , Լուս Ավե ՍՊԸ, ՌԴ	Ներկայացվում է ստորև	կգ	5602	16806	3	ք. Դիլիջան, Կամո 137	3	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
79	15871110	Քացախ	Արտյոմ և եղբայրներ ՍՊԸ, ՀՀ	Ներկայացվում է ստորև	լ	208	2704	13	ք. Դիլիջան, Կամո 137	13	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
80	3221117	Ոլոռ 1	ՆԻԿՈ ՍՊԸ, ՌԴ	Ներկայացվում է ստորև	կգ	234	29718	127	ք. Դիլիջան, Կամո 137	127	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
87	15616000	Հնդկաձավար	Կալաչեեվսկիյ էլէվատոր ՍՊԸ, ՌԴ	Ներկայացվում է ստորև	կգ	304	76912	253	ք. Դիլիջան, Կամո 137	253	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
88	15617000	Ցորենաձավար	Ա/Ձ Գևորգ Մանասերյան, ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	188	14288	76	ք. Դիլիջան, Կամո 137	76	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
89	15623200	Սպիտակաձավար	Գրեյն Միլլ ՍՊԸ, ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	242	12342	51	ք. Դիլիջան, Կամո 137	51	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
90	15619000	Հաճար	Ա/Ձ Գևորգ Մանասերյան	Ներկայացվում է ստորև	կգ	234	17784	76	ք. Դիլիջան, Կամո 137	76	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
91	15618000	Բլղուր	ՀՀ	Ներկայացվում է ստորև	կգ	308	15708	51	ք. Դիլիջան, Կամո 137	51	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
Ընդամենը							**3297124**				

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

**** Գնման ժամանակացույցում նշված են առավելագույն քանակները: Քանակները կարող են փոփոխվել շահառուների թվաքանակի փոփոխությամբ պայմանավորված:*

Բանջարեղեն			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ Անվտանգությունը և փաթեթավորումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
5	15331142	Կաղամբ	Արտաքին տեսքը՝ գլուխները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չծլած, մաքուր, մեկ բուսաբանական տեսակի, առանց վնասվածքների: 55% - վաղահաս, 45%- միջահաս: Գլուխները պետք է լինեն լիովին կազմավորված, ամուր, ոչ փխրուն և չլխկած:Գլուխների մաքրման աստիճանը՝ կաղամբի գլուխները մաքրված լինեն մինչև կանաչ և սպիտակ տերևների խիտ մակերեսը: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի:Մեխանիկական վնասվածքներով, ճաքերով, ցրտահարված գլուխների մթերումը չի թույլատրվում: Մաքրված գլուխների քաշը ոչ պակաս - 1 կգ-ից:
7	15331166	Վարունգ	Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի երկարությունը 8-15 սմ, նեղ մասի տրամագիծը՝ 4-6 սմ, թարմ, ամբողջական, առողջ, չկեղտոտված, առանց մեխանիկական վնասվածքների:

9	15331171	Պղպեղ	Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի երկարությունը՝ 12 սմ-ից ոչ պակաս, լայն մասի տրամագիծը 4 սմ-ից ոչ պակաս, կոնաձև, կարճ պտղակոթով: Առողջ, առանց արտաքին և ներքին վնասվածքների, թարմ:
10	15331167	Կանաչի խառը	Կանաչի 4 տարբեր տեսակի՝ 15% ռեհան, 30% մաղադանոս, 30% համեմ, 25% սամիթ, թարմ, կապով կամ քաշով, առանց փչացած ու չորացած մասերի:
11	3221126	Մառոլ	Երկարությունը 15 սմ-ից ոչ պակաս, թարմ, ամբողջական, մաքուր, առողջ, չթոռոմած, գյուղատնտեսական վնասատուներից չվնասված:
12	15331160	Դդմիկ	Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի երկարությունը 18 սմ-ից ոչ պակաս և ոչ ավելի 23 սմ-ից, նեղ մասի տրամագիծը 6 սմ-ից ոչ ավել, թարմ, ամբողջական, մաքուր, առողջ, չթոռոմած, գյուղատնտեսական վնասատուներից չվնասված:
Մրգեր			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ անվտանգությունը և փաթեթավորումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
22	3222132	Դեղձ	Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի տրամագիծը 6 սմ-ից ոչ պակաս, թարմ, ամբողջական, հասած, առողջ, մաքուր, չվնասված:
23	3222100	Բանան	Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի երկարությունը 12 սմ-ից ոչ պակաս, թարմ, մաքուր, առանց մեխանիկական վնասվածքների, առանց վնասատուների վնասվածքների և հիվանդությունների:
Քաղցրավենիք			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի			
37	15842100	Շոկոլադ	Կոնֆետներ շոկոլադե: Պինդ, համասեռ, արտաքին մակերեսը փայլուն, ծակոտկեն խոռոչավոր, ձևը, համը և հոտը՝ համապատասխան բաղադրագրի և տեխնոլոգիական հրահանգի, մանրեցման աստիճանը 92 %-ից ոչ պակաս, միջուկի զանգվածային մասը՝ 20 %-ից ոչ պակաս, առնվազն 15 գ զտաքաշով: Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 60 %
39	15842300	Թխվածքաբլիթ 1	Առանց միջուկի, բաղադրությունը՝ ալյուրի կոշտ տեսակ, մարգարին, շաքարավազ, աղ, վանիլին: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %
41	15831000	Շաքարավազ	Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0,0003%-ից ոչ ավել: Պիտանելիության մնացորդային ժամկետը՝ մատակարարման պահին սահմանված ժամկետի 60%-ից ոչ պակաս:
Ձկնամթերք			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
58	15221000	Ձուկ սառեցված	Ձուկ խորը սառեցված՝ առանց գլխի և փորոտիկի, խորը սառեցված բլոկներով, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթով և տեղադրված ստվարաթղթե արկղի մեջ Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60%: ԽԵԿ:
59	15119610	Ձուկ թարմ	Թարմ ձուկ ամբողջական, մեկ ձկան քաշն առնվազ0.7 կգ, փաթեթավորումը պոլիէթիլենային պարկերով, ստվարաթղթե արկղերով: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60%:
Համեմունքներ			

Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
73	15871257	Աղացած պղպեղ սև	Սովորական տեսակի: Չափածրարված կամ պոլիէթիլենային տոպրակներով: Կծու: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %: Զոլոտոե տեստո:
74	15871257	Աղացած պղպեղ կարմիր քաղցր	Աղացած պղպեղ կարմիր քաղցր: Սովորական տեսակի: Պատրաստված կարմիր քաղցր պղպեղից: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %: Զոլոտոե տեստո:
78	15870000	Վանիլին	Սննդում օգտագործվող համային հավելույթ, սպիտակից մինչև բաց դեղին բյուրեղային փոշի, վանիլինի զանգվածային մասը՝ 99 % ոչ պակաս: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 60 %: Vanil:
79	15871110	Քացախ	Քացախ խնձորի, պատրաստված թարմ խնձորից, թույլատրվող թթուների զանգվածային մասը՝ 4,0 %, մնացորդային սպիրտի ծավալը 0,3 %: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %: Խնձորի քացախ:
Ընդեղեն, Ձավարեղեն, Մակարոնեղեն			
Ընդեղեն			
Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:			
80	3221117	Ոլոռ 1	Թարմ, I-ին տեսակի, դեղին գույնի, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 60%:
87	15616000	Հնդկաձավար	Հնդկաձավար I տեսակի, խոնավությունը՝ 14,0%-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5% ոչ պակաս: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %
88	15617000	Ցորենաձավար	Ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստված բարձր տեսակի ցորենից: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %:
89	15623200	Սպիտակաձավար	Պատրաստված կոշտ և փափուկ ցորենից, կամ փափուկ ցորենից, որի պինդ խառնուրդը մինչև 20 % է և նախատեսված է սննդային նպատակներով օգտագործման համար: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %:
90	15619000	Հաճար	Ստացված հաճարի հատիկներից, հատիկների խոնավությունը 15 %-ից ոչ ավելի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %:
91	15618000	Բլղուր	Բլղուրին բնորոշ, առանց թթվահամության, դառնահամության, բորբոսահոտի, նեխահոտի և կողմնակի համի և հոտի: Դեղին գույնի, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները՝ 0,3%-ից ոչ ավելի, պատրաստված բարձր և առաջին տեսակի ցորենից: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %:

ԳՆՈՐԴ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատակազմի ղեկավար.....Ա. Գրիգորյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՒ

«Ֆոտոն» ՍՊԸ

Տնօրեն .....Ն. Պետրոսյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 2
«01» փետրվարի 2018թ. Կնքված
N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-Տ-1-Դ-3 » ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
5	15331142	Կաղամբ		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
7	15331166	Վարունգ		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
9	15331171	Պղպեղ		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
10	15331167	Կանաչի խառը		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
11	3221126	Մառոլ		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
12	15331160	Դդմիկ		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
22	3222132	Դեղձ		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
23	3222100	Բանան		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
37	15842100	Շոկոլադ		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
39	15842300	Թխվածքաբլիթ 1		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
41	15831000	Շաքարավազ		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
58	15221000	Ձուկ սառեցված		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
59	15119610	Ձուկ թարմ		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
73	15871257	Աղացած պղպեղ սև		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
74	15871257	Աղացած պղպեղ կարմիր քաղցր		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
78	15870000	Վանիլին		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
79	15871110	Քացախ		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
80	3221117	Ոլոռ 1		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
87	15616000	Հնդկաձավար		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
88	15617000	Ցորենաձավար		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

89	15623200	Սպիտակաձավար		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
90	15619000	Հաճար		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
91	15618000	Բլղուր		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
Ընդամենը															

*** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:**

**** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամողական կարգով:**

ԳՆՈՐԴ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատակազմի ղեկավար ..... Ա. Գրիգորյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Ֆոտոն» ՍՊԸ

Տնօրեն ..... Ն. Պետրոսյան

/ստորագրություն/

Կ.Տ